Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/26>> ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	02.10.2019թ. ժամը 09:15

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր՝	
Հանձնաժողովի անդամ՝	Ար. Գրիգորյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 16.09.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ը համատեղ գործունեությանը (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (18.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 27.09.2019թ. նիստին արձանագրվել է, որ ներկայացված 01.02.2018թ. կնքված ՀՀ/ՆՆ-01/18 և 24.08.2015թ. կնքված SPAP II C-3.1.1.d պայմանագրերը նմանատիպ դիտարկելու համար հարկավոր է ներկայացնել նաև հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (օրինակ՝ նախագիծ, փորձաքննության դրական եզրակացություն և այլն):

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 27.09.2019թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (27.09.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ը համատեղ գործունեությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան